

Ա. Բալաբեյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԵՋ*

Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունը, բարեկամությունն ունի բազմադարյան պատմություն: Այդ հարևան և իրար հարազատ ժողովուրդներն անցյալում գտնվելով միևնույն քաղաքական-տնտեսական պայմաններում, միշտ մոտ են զգացել միմյանց, օգնել են մեկ-մեկի, միահամուռ ուժերով կռվել են թե՛ ներքին հարստահարիչների և թե՛ արտաքին նվաճողների դեմ: Այդ ազնիվ և անշահախնդիր բարեկամության շնորհիվ անդրկովկասյան ժողովուրդները շատ անգամ փրկվել են կործանումից:

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը նոր աստիճանի բարձրացավ 19-րդ դարում, երբ ադրբեջանական, հայ և վրաց ժողովուրդները իրենց բախտը կապեցին ռուս մեծ ժողովրդի, նրա քաղաքական պայքարի հետ: Բսկ 20-րդ դարի սկզբներից նրանք՝ ռուս պրոլետարիատի գլխավորությամբ, պանծալի բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ համատեղ պայքար մղեցին կապիտալիստների և կալվածատերերի դեմ, ցարական ինքնակալության դեմ: Այս հերոսական պայքարի տարիներին է՛լ ավելի կոնկրետ անդրկովկասյան ժողովուրդների ուղղությամբ, մարտական բարեկամությունը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի պատմական հաղթանակից հետո մեր երկրի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև անդրկովկասյան ժողովուրդների միջև ստեղծվեց մի այնպիսի մերձեցում, որը մեծ հպարտությամբ անվանում ենք ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամություն: Գյանքը փայլուն կերպով հաստատեց ընկեր Ստալինի այն խոսքերը, թե՛ «Ռեվոլյուցիայի հաղթանակ՝ այս է Ռուսաստանի ժողովուրդները ազգային ճնշումից ազատագրելու միակ ուղին»:

Միայն Հոկտեմբերյան Մեծ ռեվոլյուցիայի հաղթանակի շնորհիվ Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդները ստացան ազատություն, իրավունք և ազգային վերածննդի հնարավորություն: Բոլշևիկյան պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության շնորհիվ մեր երկրում դրվեցին ժողովուրդների ամուր բարեկամության և փոխադարձ համագործակցության հիմքերը: Ստեղծվեցին նոր, ընկեր Ստալինի արտահայտությունով ասած, սոցիալիստական ազգեր, որոնք անխզելիորեն կապված լի-

* Զեկուցված է 1952 թ. ապրիլի 28-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի նիստում, նվիրված Ադրբեջանում Սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին:

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 3, էջ 238:

նելով միմյանց հետ, պայքարեցին միևնույն նպատակի՝ սոցիալիզմի կառուցման համար։

ՍՍՌՄ ժողովուրդները բարեկամությունը ավելի ամրապնդվեց ու խորացավ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և հանգիստացավ Սովետական Միության հզորության աղբյուրներից մեկը։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուղուցիայի 26-րդ տարեդարձին նվիրված զեկուցման մեջ ընկեր Ստալինը ասել է. «Մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը զիմացավ պատերազմի բոլոր դժվարություններին ու փորձություններին և էլ ավելի կոփվեց սովետական բոլոր մարզկանց կողմից ֆաշիստական զավթիչների դեմ մղվող ընդհանուր պայքարում»։

Այդ է Սովետական Միության ուժի աղբյուրը¹։

Անդրկովկասյան ժողովուրդները դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը միշտ արտացոլել է հայ, վրաց և ադրբեջանական գրականության մեջ։

Նիզամի և Ռուսթավելի, Սայաթ Նովա և Վազիֆ—անա խոսքի այն մեծ վարպետները, որոնց երկերում պայծառ կերպով գրասերված է անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը։

19-րդ դարում գրողները էլ ավելի խորը կերպով են գիտակցում սոցիալական անարդարությունների պատճառները և ժողովուրդների բարեկամության հարցին մոտենում են նոր տեսանկյունից։ Հայ, ադրբեջանցի և վրաց գրողները անսահման սիրով և մեծ համակրանքով են խոսել երեք հարևան ժողովուրդների սոցիալական պայքարում ամրապնդվող եղբայրության մասին։ Խ. Արսլյանին և Ն. Բարաթաշվիլուն, Մ. Ֆ. Ախունդովին և Գ. Սունդուկյանին, Ակակի Ծերեթելուն և Կ. Բ. Ջաֆրին, Մ. Նալբանդյանին և Ի. Ճավճավաձեին համահավասար հարազատ են եղել հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդները։ Նրանց բոլորին էլ հուզել է այդ ժողովուրդների բախտը, ծանր կյանքը։ Այդ առաջավոր գրողները ոչ միայն արտացոլել են անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը իրենց ստեղծագործություններում, կատարել են որոշակի աշխատանք՝ գրական կապերի ուժեղացման ուղղությամբ, այլև անձամբ պայքարել են այդ ժողովուրդների միջև ավելի ևս մտերմություն ստեղծելու, նրանց և ուսս մեծ ժողովրդի միջև բարեկամական հարաբերությունները ամրապնդելու, առաջավոր ուսս կուլտուրան տարածելու ուղղությամբ։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Անդրկովկասի բոլոր առաջավոր, գեմոկրատ գրողներն ու հասարակական գործիչները (Պ. Պոռոյան, Հ. Բ. Ջարդարի, Գոգերաշվիլի, Ղ. Աղայան, Ծերեթելի, Ն. Բ. Վեդիբով, Հ. Թումանյան, Ջ. Մամեդկուլիզադե, Մ. Ա. Սարիր, Ավ. Իսահայան, Ա. Շիրվանզադե, Ա. Հախվերդով և այլն) հանգիստացել են երեք հարևան ժողովուրդների հավատարմության և բարեկամության ուժեղացման համար մղվող պայքարի առաջամարտիկները։ Այդ բոլոր գրողները երազել են անդրկովկասյան ժողովուրդներին տեսնել ընդմիջտ ազատագրված բոլոր տեսակի ճնշումներից ու շահագործումից։ 20-րդ դարի սկզբներին, երբ

¹ Ի. Վ. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, 1950 թ. 5-րդ հրատ., էջ 142։

ամբողջ Ռուսաստանում, այդ թվում նաև Անդրկովկասում լայն չափերի էին հասնում ունեցություն շարժումները և ժողովուրդները դեն նետելով լեզվի, կրոնի և այլ տեսակի խարուխյունները, միացել էին ունեցություն դրոշի տակ, հայ, վրացի և ադրբեջանական դեմոկրատ գրողները կանգնած էին ժողովրդական մասսաների կողմը, պաշտպանում էին նրանց շահերը:

Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից ստեղծված բոլշևիկյան մամուլը հանդիսացավ ոռւս, հայ, վրացի, ադրբեջանական և այլ ժողովուրդների ունեցություն բարեկամության, դասակարգային պայքարի կազմակերպիչն ու ոգևորողը: Այդ մամուլի էջերում ստեղծվեցին հայ, վրացի և ադրբեջանական պրոլետարական գրականության անդրանիկ նմուշները, որոնք արտացոլեցին անդրկովկասյան պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիների նոր, ունեցություն բարեկամությունը և նրանց միասնական պայքարը ցարիզմի, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ¹:

Այստեղ, առաջին հերթին, պետք է հիշատակվի անդրկովկասյան պրոլետարիատի մարտական երգիչ, նրա հույզերի և մտորումների մեծ բանաստեղծ Հ. Հակոբյանի անունը, որը համարձակ և ոգևորությամբ գովերգեց պրոլետարիատի ունեցություն պայքարը, իր կրակոտ խոսքերով կոչ արեց բոլոր ազգությունների աշխատավորներին համառ մարտերի:

Ադրբեջանական պրոլետարական գրականության հիմնադիրներից մեկն է եղել մեծանուն գրող Սեյիդ Մուսևին, որը հանդես է եկել բոլշևիկյան «Կոչ-Դեմեթ» թերթում (1906 թ.):

Իր կյանքը և ստեղծագործությունը պրոլետարիատի և աշխատավոր մասսաների ազատագրման վեհ գործին նվիրած Սեյիդ Մուսևին կարճ ժամանակամիջոցում գրել է «Նոր կյանքի լուսարացին», «Մուսուլման-հայկական կոտորածից մի դեպք», «Հակ-չուկ» պատմվածքները և «Պղնձահանքում» պիեսը:

Հետաքրքրական է նշել, որ Ս. Մուսևին ամբողջ ստեղծագործություններն նվիրված է հայ, ադրբեջանական, վրացի և ոռւս ժողովուրդների եղբայրության ամրապնդման, նրանց նոր, ունեցություն բարեկամությունը կոփելու համար մղվող պայքարին:

Հոկտեմբերյան ռոյալիստական Մեծ ունեցության խոշորագույն հեղաշրջում և արմատական փոփոխություն առաջ բերեց ադրբեջանական գրականության մեջ, ադրբեջանական գրողների կյանքում: Այն բոլոր առաջավոր, դեմոկրատական գրողները, որոնք նախառուցություն շրջանում պայքարում էին ժողովուրդների ազատության ու երջանկության, բոլոր ազգերի եղբայրության համար, անսահման ուրախությամբ դիմավորեցին սովետական իշխանության հաղթանակը, որն ընդմիջտ ազատագրեց ժողովուրդներին դարավոր ճնշումից ու շահագործումից, իսպառ վերացրեց ազգային թշնամանքը:

Այս մեծագույն հաղթանակի խորը իմաստը գիտակցող ադրբեջանական առաջավոր դեմոկրատական գրողները (Ջ. Մամեդկուլիզադե, Ա. Հախվերդով, Ս. Ս. Ախունդով, Մ. Ս. Օրդուբադի, Ջ. Ջաբրարլի և այլն) մեծ

¹ Այս մասին տես մեր հոդվածը՝ տպագրված «Սովետական գրականություն» և արվեստ» ամսագրի 1952 թ. 4-րդ համարում:

ուրախությամբ ողջունեցին Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումը:

Այդ գրողները, որոնք դեռ ռեուլուցիայից առաջ պայքարում էին անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու համար, այժմ սովետական կարգերի մեջ տեսնում էին այդ կարևորագույն հարցի լուծումը: Նրանք գիտակցում էին, որ միայն սովետական իշխանության շնորհիվ և նրա օրոք վերջնականապես կվերանա ցարիզմի և նացիոնալիստական պարտիաների կողմից անդրկովկասյան ժողովուրդների մեջ սերմանված ժամանակավոր թշնամությունը, կստեղծվի ամուր, անհաղթելի բարեկամություն, կստեղծվի իսկական եղբայրական համագործակցություն:

Մեծ դեմոկրատ-գրող Ջ. Մամեդկուլիզադեն սովետական կարգերում տեսնում էր հայ և ադրբեջանական ժողովուրդների իսկական եղբայրության և միասնական համագործակցության հիմքը: Նա մեծ հիացմունքով խոսում էր այն կարևորագույն փաստի մասին, որ հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև անցյալում եղած թշնամանքը այլևս չկա, ինչպես և չկան այդ թշնամության հրահրողները՝ ցարիզմը և տեղական բուրժուազիան:

«... Անցյալում ինչ որ եղել է՝ անցել գնացել է, — գրում էր Ջ. Մամեդկուլիզադեն 1930 թ. իր հիշողությունների մեջ, — ամբողջ ազնվությամբ և լի հավատով ասում եմ, որ արդեն այդ սև օրերը մեր երկրում ընդմիշտ կմնան որպես տխուր մի հիշողություն և միայն հիշողություն: Այս երկուս հարեանի և երկու եղբոր գժտությունները ընդմիշտ վերացել են, ինչպես որ հավիտյան կործանվել են այդ դժբախտությունը ստեղծողը և նրա ոգեշնչողը հանդիսացող կառավարութայունը»:

Ս. Ս. Ախունդովը իր հերոսներից մեկի լեզվով ասել է. «Հին գժտությունը հին պետութայն հետ էլ գնաց»:

Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակում առաջանում են նոր, երիտասարդ սովետական բանաստեղծներ ու գրողներ (Սուլեյման Ռուստամ, Մամեդ Վուրդուն, Ռասուլ Ռզա, Մամեդ Ռահիմ և այլն), որոնք անցյալից եկած դեմոկրատ գրողների հետ միասին պայքարում են ադրբեջանական սովետական գրականության զարգացման համար:

Ադրբեջանական սովետական գրողները շարունակելով նախառևույծից շրջանի առաջավոր պրոլետարական և դեմոկրատական գրականության լավագույն տրագիկոսները, պայքարում են սոցիալիստական ռեալիզմի հաղթանակի համար, ստեղծելով սովետական ժողովրդի ձեռք բերած վիթխարի հաջողություններին նվիրված յազմաթիվ երկեր:

Ադրբեջանական գրողները գովերգում են ժողովուրդների, այդ թվում անդրկովկասյան ժողովուրդների նոր բովանդակություն ստացող բարեկամությունը:

Հոկտեմբերյան ռեուլուցիայի պատմական հաղթանակի շնորհիվ ազգային վերածննդի հնարավորություն ստացած անդրկովկասյան ժողովուրդները սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո միասնական

¹ Ջ. Մամեդկուլիզադե, Երկեր, հատ. 2, Բաքու, Ազերնեշ, 1936, էջ 404:

² Ս. Ս. Ախունդովի արխիվը: Ադրբեջ. ՍՍՍՖ ԳԱ Նիդամիի անվան գրականության ինստիտուտի ձեռագրային ֆոնդի ինվենտար № 6348:

պայքար ծավալեցին նոր, սոցիալիստական կյանքի ստեղծման համար: Այդ պայքարի ընթացքում կռիվում էր նրանց բարեկամությունը, որը իր արտացոլումն էր գտնում ագրեթանական սովետական դրականության մեջ: Գրողները մեծ սիրով և հիացմունքով գովերգում էին ագրեթանցի, հայ և վրացի ժողովուրդների ազատագրության մեծագույն նշանակությունը, սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում նրանց ձեռք բերած հաղթանակները:

Անդրկովկասյան ժողովուրդներին ազատագրումը, նրանց նոր, անխորտակելի բարեկամությունը գովերգողներից առաջինն է եղել Ս. Ս. Ախունդովը: Նա, Անդրկովկասում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո, 1922 թ. գրել է իր «Շեյթան» (սատանա) վերնագրով պիեսը, որտեղ գեղարվեստական ուժով ցույց է տվել, որ սատանան՝ ցարական կառավարությունն արդեն կործանված է, վրացին, հայը և ագրեթանցին մեծ սեր և համակրանք են տածում միմյանց հանդեպ: Հեղինակը վարպետորեն վերարտադրում է այն ճշմարտությունը, որ անդրկովկասյան ժողովուրդները իրենց երջանկությունը, իրենց անխորտակելի բարեկամական հարաբերությունները ստեղծել են շնորհիվ սովետական իշխանության: Շատ բնորոշ են պիեսի գործող անձերից մեկի՝ Սադըլ քիչիի խոսքերը: Նա, գիմելով երիտասարդներին, ասում է.

«Ջավականքս, ես հասել եմ այս տարիքի, բայց այսպիսի եղբայրություն, ընկերության աշխարհ չեմ տեսել, Վոլոդ մարդիկ հավասար են» ասողներ շատ են եղել, բայց մինչև այժմ այդ բանը, բացի ընդհանրությունից, ոչ ոք չի իրականացրել»:

Սամեդ Վուրդունը իր առաջին բանաստեղծություններից մեկը «Դիլիջանի ձորում» (1927 թ.) նվիրել է անդրկովկասյան ժողովուրդներին նոր երջանկությամբ ձուլված բարեկամությանը: Բանաստեղծությունը նվիրված է Դիլիջանին, նրա բնության նկարագրությանը: Այդ բնությունը գեղեցիկ է և ուրախությամբ լի: Բանաստեղծը բնության այդ նկարագրության մեջ տեսնում է ժողովրդի ապրած մեծագույն վերափոխումները: Սովետական մարդկանց հաղթանակները փոխել են նույնիսկ սարերի, ձորերի և անտառների անցյալ տեսքը: Չկան արդեն այն ժամանակները, երբ Քալբից արյուն էր հոսում: Կարծես բնությունն էլ է մասնակցում մարդկանց երջանկությանը:

Նորից քեզ տեսա, ձոր Դիլիջանի,
Հուշերս որպես հավքեր են գալիս,
Կյանքն է ճանապարհ մեծ քարավանի,
Կյանքեր են գնում, կյանքեր են գալիս:

Դալար ձորերից սազեր են խոսում,
Հավքերի երգը աշխարհն է լսում,
Ե՞րբ էր, քարերից արյուն էր հոսում,
Հիմա մարգարիտ ջրեր են գալիս:

¹ Ս. Ս. Ախունդովի արխիվը: Ագրեթ. ՍՍՌ ԳԱ Նիգամիի անվան գրականության ինստիտուտի ձեռագրային ֆոնդի ինվենտար № 6348:

² «Ագրեթանական պոեզիայի անթոլոգիա», Հայպետհրատ, 1982:

Այդ բնության ծոցում իրենց երջանիկ ապագան են կերտում հայ, վրացի և ադրբեջանական աշխատավորները, ապրում ավելի բարեկամաբար, քան երբևիցե: Կազրեկ, Արարատ և Շահդադ սարերը հունդիսանում են երեք եղբայրակից ժողովուրդների հավատարմության ու բարեկամության վկաները:

Գարունն աշխարհն է զուգում ծաղկառատ,
Դու էլ ես ծաղկում անուշ անարատ,
Սարերն են ժպտում Կազրեկ, Արարատ,
Շահդադի հովտից հյուրեր են գալիս¹:

Ստրկությունից ընդմիջտ ազատագրված հայ ժողովրդի վերածննդի, իր երջանիկ ապագան կառուցելու համար նրա մղած պայքարի, ադրբեջանական ժողովրդի իր հարևանի հանդեպ տածած անսահման սիրո մասին է խոսում Ս. Ռուստամի «Ողջուն» երևանին» բանաստեղծությունը, գրված 1927 թվին:

Այդ բանաստեղծության մեջ հեղինակը «սիրտը մազութոտ» Ապշերոնի և ադրբեջանական ժողովրդի ջերմ ողջունն է ուղարկում իր հարևանին, հայ ժողովրդին, որը բոլոր տեսակի դասակարգային թշնամիների դեմ պայքարում հաղթող է դուրս եկել, նետել է իր վրայից անցյալի հետամնացությունը և հաջողությամբ կառուցում է փայլուն ապագան:

Ստալինյան հնգամյակների տարիներին ադրբեջանական սովետական գրողները նոր ուժով, նոր ոպեորությամբ գովերգել են ժողովուրդների բարեկամության գաղափարն ընդհանրապես և անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը մասնավորապես:

Այդ եղբայրությունը պատկերված է կոնկրետ մարդկային խարակտերների միջոցով, աշխատանքային և մարտական սխրագործությունների պայմաններում:

Ադրբեջանական գրողների առաջնակարգ խնդիրն է եղել գովերգել մեր երկրում սոցիալիստական շինարարության ասպարեզում եղբայրական համագործակցության շնորհիվ ժողովուրդների ձեռք բերած հաղթանակները:

Սամեդ Վուրդունի «Առաջնորդի հայրենիքը», «Յուղաշ, ընկեր, ամխանագո», «Երջանկության երգը», Սուլեյման Ռուստամի «Բմ երկիրը», Նիգյար Ռաֆիբեյլի «Այսպագ» և այլ բանաստեղծությունները գրված են հայրենասիրական մեծ շնչով, արտացոլում են ադրբեջանական ժողովրդի, հայ և վրաց ժողովուրդների հանդեպ ունեցած անխորտակելի սիրո ու բարեկամական զգացմունքները, արտահայտում են անսահման երախտագիտություն՝ այդ բարեկամության մեծ կադմակերպիչ ու ոգեշնչող ընկեր Ստալինի նկատմամբ:

Ռասուլ Ռզան իր «Ծաղկած ալգին» բանաստեղծության մեջ վառ գույներով նկարագրել է գեղատեսիլ Հայաստանը, մեծ հրճվանքով խոսել հայ ժողովրդի ձեռք բերած հաղթանակների մասին: Բանաստեղծը իրավացիորեն Հայաստանը անվանել է «Ծաղկած ալգին», որն ընդմիջտ վերկվել է վշտերի ու զրկանքների ճիրաններից:

¹ «Ադրբեջանական սովետիայի անթուրդիա», Հայսետհրատ, 1932:

Ինչո՞ւ այս երկրում էլ ձմեռ չկա,—
 Ո՛վ որ հանգիպեց, ես հարցմունք արի,
 Ամենքի սրտում ու կրծքի վրա
 Կրեմլի աստղերը շողացին բարի:

Ասացի.— Ո՛վ իմ եղբայրներ անգին,
 Այս ծաղկած այգին ձեզ ո՛վ պարգևեց.
 Ի՞նչու կողմերից պատասխան տվին.
 — Ստալինն է մեր այգեպանը մեծ¹:

Խարավոր ստրկությունից ազատագրված, լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ, իրենց նոր կյանքի կառուցման ասպարեզում մեծագույն հաղթանակների հասած անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական համագործակցությանը նվիրված լավագույն բանաստեղծություններից մեկն է Ս. Վուրդունի հայտնի «Կովկաս» բանաստեղծությունը (1934 թ.)²։ Բանաստեղծը հիշում է երեք եղբայրակից ժողովուրդների անցած վշտերը ու տառապանքները, ապա մեծ ոգևորությունով խոսում է այն մասին, թե ինչպես սովետական կարգերի շնորհիվ սև անցյալից ոչինչ չի մնացել:

Վշտի օրերն այն մոխրացան հավետ,
 Անցան մեր պապերն իրենց փառքի հետ—
 ասում է բանաստեղծը և գովերգում Կովկասի նոր կյանքը, նոր գործերը:

Ա՛յլ են հիմա մեր դաշտ ու լեռները,
 Ա՛յլ են ցերեկներն ու գիշերները,
 Ա՛յլ են մտքերն ու հույզերը մարդու,
 Փոխվել է նա շատ, դարձել իմաստուն,
 Տես ուժանակն է պայթում լեռներում,
 Ճամփաներ բացում այն խափարներում,
 Սուրում ահա գնացքներն առաջ,
 Տանում են մեր կյանքի պտուղներն առատ...³

Կովկասը՝ այդ ուրախ ու երջանիկ երկիրը, պատկանում է երեք եղբոր, որոնք ձեռք-ձեռքի տված, կերտում են պայծառ ապագան:

Հոսում են կարմիր քարվանսները մեր,
 Կեցցեն մեր մարդիկ—դարձած եղբայրներ:
 Մեր արնով ջրված այս երկրում անծայր
 Կյանքը կլինի ավելի պայծառ:
 Այս բարձունքները, այս ձորերը մեր,
 Որ հնում ինչքան արցունք են խմել,
 Արդ երեք եղբոր հայրենիքն է վառ...

Այդ ապագան գտնվում է երիտասարդ սերնդի ձեռքում: Հայ, ադրբեջանցի և վրացի երիտասարդները մեր երկրի բազմազգ երիտասարդներ-

¹ «Հայրենիքի համար» (ադրբեջանական բանաստեղծներ), Հայպետհրատ, 1943:

² Նույն տեղում:

րի հետ միասին նոր աշխարհ են կառուցում: Նպատակներն ու իդէալներն միասնութիւնը նրանց մեջ ստեղծել է ամուր րարեկամութիւն, նոր, սպասելիստական հարաբերութիւններ: Ահա այդ գաղափարներն են արծարծում Ս. Ս. Ախունդովի «Փաթմա և Արշակա. Մ. Հյուսէյնի «Հայ աղջիկը» պատմվածքները, Ա. Հախվերդովի «Շատ լավ» պիեսը, Մ. Ռահիմի «Վրացի աղջիկը» ռանաստեղծութիւնը: Այդ երկերի բոլոր հերոսներին միացնում է սովետական հայրենասիրութեան վեհ գաղափարը: Այդ երիտասարդների մեջ նոր բովանդակութիւն ունեցող բարեկամութիւնն ու հարաբերութիւնները ստեղծվում են հնի դեմ համառ պայքարի մթնոլորտում: Անցյալից քնացած հին, անպետք սովորութիւնները պարտվում են նորի առաջ, հաղթանակ են տանում նոր, սոցիալիստական հարաբերութիւններն ու հասկացողութիւնները:

Ազրբեջանական սովետական գրականութեան մեջ ստեղծվել են բազմաթիւ երկեր, որոնք արտացոլում են անդրկովկասյան ժողովուրդների համատեղ ունեցիտն և հերոսական պայքարը անցյալում: Ջ. Ջաբրարլիի հայտնի «1905 թվին» պիեսում մինչև վերջ մերկացվում է ցարական կառավարութեան ստոր քաղաքականութիւնը, որը նպատակ ունենալով տապալել ունեցիտն շարժումը, ուղղված էր ժողովուրդների միջև ընդհանրութեան կազմակերպելուն: Ջաբրարլին ճշմարտացիորեն նկարագրում է հայերի և ազրբեջանցիների նոր, ունեցիտն բովանդակութեամբ ձուլված դարավոր բարեկամութիւնը, ուստի մեծ ժողովրդի զավակների հետ միասին ցարիզմի ու կապիտալիզմի դեմ նրանց մղած հերոսական ունեցիտն պայքարը, հասնելով գեղարվեստական և քաղաքական լայն ընդհանրացումների:

Ջաբրարլին լուրջ կերպով ուսումնասիրել է անդրկովկասյան ժողովուրդների կյանքը, անձամբ եղել հայերի ու վրացիների մոտ, տեսել է, թե նրանք իրենց նպատակներով ու սովորութիւններով, նույնիսկ իրենց հագուստով ինչքան նման են իրար: Ուսելով «1905 թվին» պիեսի ստեղծման պատճառների մասին, Ջաբրարլին գրում է.

«Ես Վրաստանում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում եղած ժամանակ հանգիպեցի մի շարք ազգերի: Սրանք հանգիստ կերպով զրադված էին սոցիալիստական շինարարութեամբ: Ես հանգիպեցի քոչվորներին, տեսա մի ազրբեջանուհու, որը վազում էր հոտի կողքով: Նա առանց չափարայի էր: Նորից հանգիպեցի մի ուրիշ կնոջ, որը հայ էր: Սա էլ ամբողջովին հագնվել էր այնպես, ինչպես առաջին կինը: Առաջին հայացքից նրանց իրարից տարբերելը դժվար էր: Այս բոլոր ժողովուրդների տան գույքը, գյուղատնտեսական գործիքները, սովորութիւնները, երգերն ու պարերը նույնն էին...»¹:

Անմոռանալի են Ջ. Ջաբրարլիի ստեղծած կերպարները «1905 թվին» պիեսում: Իրար հանդեպ անսահման սեր և մտերմութիւն կրող ազրբեջանցի Իմամվերդի և հայ Ալավերդի, նրանց զավակները Բախշին և Սոնան, որոնք մանկութեան ընկերներ են, քաջ ունեցիտներն են Էյվազ Ասրիյան և Վոլոդին, որոնք երբեք չեն մոռացվում ընթերցողի և հանգիստաւեսի կողմից:

Ջաբրարլի «1905 թվին» պիեսը հայ և ազրբեջանական ժողովուրդ-

¹ «Էդերիյաթ դպեթի» (Գրական թերթ), 1934, № 9 (Բաքու):

ների ազգային բարեկամության հոյակապ էպոպեան է, որը ստեղծվել է պոլետական երկրում, այն ժամանակ, երբ ազգային եղբայրությունը և բարեկամությունը դարձել է կյանքի ընական և կարևորագույն պայմանը: Ջարբարլին հավատում է այս բարեկամության հավիտենականությանը և հանձնարարում է երիտասարդ սերնդին՝ պաշտպանել այդ: Դրամատուրգը ավարտում է իր պիեսը ծերունի Բախշի խոսքերով, որը դիմելով երիտասարդներին, ասում է.

«Տուր ձեռքդ Սոնա, տուր ձեռքդ, Բախշի... Թող անցյալի արյունոտ սլաքները ընդմիշտ թաղվի այս հին գերեզմանատանը: Թող նոր եղբայրության աշխարհի անսասան թևերը, երկու եղբայրակից ժողովուրդի միացած կյանքի պես ընդմիշտ միացնի ձեր ձեռքերը»:

Ադրբեջանական սովետական գրականության պարծանքը հանդիսացող մի շարք ուրիշ ստեղծագործություններում (Մ. Ս. Օրգուբադիի «Մշուշապատ Թավրիզը», «Մարտնչող քաղաք» և «Ընդհատակյա Բաքու», Ա. Շախկի «Արաղ» վեպերում, Ս. Ռուստամի «Ղաչախ Նարի», Ս. Վուրդունի «Վադիֆ» և «Մանլար» պիեսներում) նույնպես պատկերված է ժողովրդի ունուցիոն և հերոսական անցյալը, ցույց է տրված ադրբեջանական ժողովրդի դեպի հայ և վրացի ժողովուրդները տածած անսահման սերն ու համակրանքը: Այդ երկերի հեղինակները հատուկ ոգևորությամբ նկարագրել են անգրքկովկասյան ժողովուրդների մղած համատեղ պայքարն իրենց ազատության և անկախության համար:

Ադրբեջանական սովետական գրականության մեջ ստեղծվել են այնպիսի լիարժեք կերպարներ, ինչպիսիք են ունուցիայի հերոս մարտիկներ, իրենց կյանքն ու գործունեությունը ժողովուրդների բարեկամության վեհ զործին նվիրած, մեծ Ստալինի հավատարիմ աշակերտներ Լ. Կեցիուվելու, Մանլարի, Ստ. Շահումյանի, Բ. Գնունյանցի, Մ. Ազիզբեկովի, Ս. Մ. Կիրովի, Ս. Օրջոնիկիձեի, Ա. Միկոյանի, ~~Խ. Զ. Բադրադի~~ կերպարները: Այս ուղղությամբ շնորհալի աշխատանք են կատարել Մ. Ս. Օրգուբադին, Ս. Վուրդունը, Մ. Հյուսեյինը, է. Մամեդխանլին, Ս. Ռահմանը:

Անդրկովկասյան ժողովուրդների անսասան բարեկամության և մարտական համագործակցության գաղափարը իր վառ արտահայտությունն է գտել Բաքվի անմահ 26 հերոսներին նվիրված երկերում:

Մ. Ս. Օրգուբադին, Ս. Վուրդունին, Ս. Ռուստամին, Մ. Ռահիմին, Ռ. Ռզային, Մ. Հյուսեյինին և բազմաթիվ այլ բանաստեղծներին ու գրողներին միշտ ոգևորել է Բաքվի հերոս կոմունարների կյանքն ու պայքարը, որպես ժողովուրդների բարեկամության ամենավառ արտահայտություն: Բաքվի կոմիսարներին նվիրված երկերի լավագույններից մեկն է Ս. Վուրդունի «Գսանվեց» պոեմը, որը գրված է 1938 թվականին:

Բանաստեղծը հիմնականում պատկերում է Բաքվի 26 կոմիսարների կյանքը, ունուցիոն պայքարը, զուգակցելով այդ մի շարք օժանդակ դեպքերի: Ահա Բաքուն, ունուցիայի այդ օջախը, որը կոնտրոսուցիոն պարտիաների ոճրագործությունների հետևանքով, վշտահար է դարձել, վիրավորվել է... ժողովուրդը անսահման հալածանքների է ենթարկվում դավաճանների կողմից:

¹ Զ. Զարարլի, Երկեր, հատ. 4, Ազերնեշը, 1931:

Ժողովրդի ռիսկերիմ թշնամիները՝ էսերները, մուսավաթականները և գաշնակները, ունեցողի ժողովրդին ավելի ուժեղ հարված հասցնելու նպատակով, Բաքու են հրավիրում անգլիացի ու թուրք բռնակալներին:

Բայց Բաքուն չի դադարել պայքարելուց: Բաքվի հերոս պրուետարիատը, չվախենալով ոչ մի սպառնալիքից, հերոսարար շարունակում է իր պայքարը ազատության համար:

Բաքվի պրուետարիատի ունեցողի հզորացող պայքարի կազմակերպիչներն ու ոգեշնչողներն են հանդիսանում մեծ առաջնորդներ Լենինը և Ստալինը:

Ընկեր Ստալինը սովորեցնում է Գովկասի որդիներին ավելի ևս համախմբվել, պայքարել այնպես, ինչպես պայքարում է հերոս ռուս պրուետարիատը: Ընկեր Ստալինի՝ Բաքվի պրուետարիատին ուղղված նամակում ասված է.

Ով որդիներ արի, արծվաբուն Կովկասի,
Թող ձեր միջև երբեք անջրպետ չքաշվի
Ոչ ազգի անունից, ոչ հավատի, հնի,
Եվ ոչ էլ անունից անախոս կրոնի:
Նայեք դուք ձեռքերին աշխարհի բազմաջանք,
Նույն կոշտերը ունեն, ուր էլ լինեն նրանք:
Հզոր բախումների օրրանն է Բաքուն,
Դաս եմ առել այնտեղ ես մեր ընդհատակում:
Նայեք, անգլիական զավթիչներն են ձեր դեմ.
Սովորեցեք նրանց այնպես փշրել, ջարդել—
Ինչպես ռուս մարդիկ են ջարդում ու տրորում¹:

Բաքվի դրուժյունը ծանր է: Շահումյանը մտազրադ է: Նա կարդում է Լենինից ստացած հեռագիրը: Լենինը՝ հանձնարարում է Շահումյանին ավելի զգուշ լինել: Ընթերցողը սրտի մեծ վշտով հետևում է դեպքերին, ցավում 26 հերոսների եղբրական մահով, որ կատարվեց անգլիական ուժերի զորքերի ձեռքով՝ Աղջա-կումի ավազուտներում:

Բանաստեղծը ունեցողի այն հաշտակների մահից առաջ ցուցաբերած քաջությունն ու անվախությունը, դեպի երջանիկ ապագան ունեցած մեծագույն հավատը վերարտադրել է ճշմարտացիորեն:

Բանաստեղծը վերարտադրում է այն իրականությունը, որ սովետական ժողովուրդները իրենց կյանքը ունեցողի այն գործին զոհած 26 կոմունարներից առնում են հերոսության դասեր: 26 կոմունարների պայծառ հիշատակը միշտ ապրում է ժողովուրդների սրտում, «սպառնալիքները ծերանում է, Գահելանում են 26 կոմունարները»:

Ադրբեջանական սովետական գրողները լուրջ աշխատանք են կատարել քաղաքացիական կռիվների ժամանակ թշնամու դեմ համատեղ պայքար մղած ադրբեջանցիների, հայերի ու վրացիների հերոսությունները պատկերելու ուղղությամբ: Շատ արժեքավոր են այս տեսակետից Միր-ջալալի «Շերիտառարդ մարդու մանիֆեստը», Արուստանի «Աշխարհը

¹ «Ադրբեջանական պոեզիայի անթոլոգիա», Հայպետհրատ, 1952:

կործանվում է՝ Մ. Ռահիմովի «Շամո», Մ. Հյուսեյնի «Վարարում» վեպերը և է. Մամեդիսանլիի վերջերս գրված «Արևելքի առավոտը» պիեսը, որոնց մեջ նկարագրվում են անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը մուսավաթականների, դաշնականների ու մենչևիկների և նրանց օտարերկրյա պաշտպանները հանդիսացող արյունարրու իմպերիալիստների դեմ:

Բազմազան է եղել ստալինյան հնգամյակների տարիների ադրբեջանական սովետական գրականության թեմատիկան և այդ բազմազանության մեջ իր արտացոլումն է գտել հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության գաղափարը:

Անդրկովկասյան ժողովուրդները արագիցիոն բարեկամությունը ավելի ևս ամրապնդվեց Հայրենական Մեծ պատերազմի կրակների մեջ, երբ նրանք ՍՍՌԽ-ը բոլոր ժողովուրդների հետ միասին մարտնչում էին երկրի պաշտպանության համար:

Ադրբեջանական գրողներն այդ նոր մարտական բարեկամությանը բազմաթիվ երկեր նվիրեցին: Ս. Վուրդունի, Ս. Ռուստամի, Ռ. Ռզայի, Մ. Ռահիմի, Ս. Սարբվելիի, Ա. Ջամիլի, Մ. Դիլրազի, Ն. Ռաֆիբեյլի, Ջ. Սալիլի և ուրիշների՝ պատերազմի տարիներին գրած բոցաշունչ բանաստեղծությունները գովերգում էին ժողովուրդների բարեկամությունը, նրանց սխրագործությունները կռիվի դաշտում և թիկունքում, կրկնապատկում ատելությունը թշնամու նկատմամբ:

Պատերազմի տարիներին և ետպատերազմյան ժամանակաշրջանում գրված տարբեր ժանրերի բազմաթիվ երկերում, հատկապես Մ. Ռահիմովի «Մեդալիոն», Մ. Բջալալի «Հասակակիցներս», Մ. Հյուսեյնի «Հառաչանք», Արուհասանի «Բարեկամության ամրոցը» վեպերում և վիպակներում խոսվում է ֆաշիստական զավթիչների դեմ պատմական հաղթանակ տարած սովետական ժողովրդի մարտական սխրագործությունների և անխորտակելի բարեկամության մասին:

Հայրենական պատերազմի տարիներին անդրկովկասյան ժողովուրդների մարտական բարեկամությանը նվիրված ամենալավ չափածո գործերից է Մ. Ռահիմի «Երեք եղբայր» բանաստեղծությունը:

Հայրենական պատերազմի այն օրերին, երբ ֆաշիստական զավթիչները գտնվում էին Կովկասյան լեռների մատույցներում, Կովկասի զավակները հերոսաբար կռվում էին նրանց դեմ, իրենց արյունով պաշտպանում Հայրենիքը:

Ահա այդ օրերին գրված «Երեք եղբայր» բանաստեղծությունը անցնում էր ձեռքից-ձեռք և ոգևորում մարտիկներին նորանոր սխրագործություններին:

Խորը լիրիզմով հագեցված այդ բանաստեղծության մեջ հեղինակը խոսքն ուղղելով Կովկասյան լեռների մատույցներում մարտնչող ադրբեջանցի, հայ և վրացի մարտիկներին՝ կոչ էր անում ջախջախել գազազած թշնամուն, որը ձգտում էր արյունով լցնել երեք եղբայրների երկիրը, խափանել նրանց ձեռք բերած երջանկությունն ու հաղթանակները:

Երկիր երեք եղբայրների,
 հեյ դու Կովկաս—մայր իմ տիտան,
 Հանուն քո սուրբ ուրախության՝
 պատրաստ եմ ես և մեծ սխրություն—
 ասում էր բանաստեղծը երեք եղբոր սրտի ամենաջերմ խոսքերը՝
 Հնուց ի վեր եղբայր են վես
 Կազրեկ, Կյապուս և Ալագյազ,
 Օտար ձիեր չեն խլմի, չէ՛
 հորդ գետերիդ ջուրն, իմ Կովկաս:
 Ժողովուրդներդ են ձեռք բերել
 եղբայրություն ու հաղթանակ:
 Եվ փառքդ անմեռ կպաշտպանեն՝
 որպես անպարտելի բանակ:
 Այդ երեք եղբայրները ոտքի են ելնում կրծքով պաշտպանելու հարա-
 զատ հայրենիքը:

... Ելան, որպես մի ընտանիք,
 ելան, երեք եղբայրն արի,
 Որ ոհմակներ բնաջնջեն
 և մոխրանա քո թշնամին:
 Երեք եղբոր ուժերն են շատ,
 երեքն էլ՝ լուսավոր, փառքով—
 Նրանք հիմի մեկ են սիրով,
 մեկ են հոգով և օրենքով:
 Նրանք ավանդ ունեն հնուց
 չխնայել չար թշնամուն:
 Հնուց ի վեր կովում են, տես,
 եղբայրարար և միաձույլ:

Բանաստեղծը հավատ է հայտնում, որ Հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելած, կրկին իրենց սրերը բարձրացրած Արսենները, Դավիթները և Քյոռոզլիները անպայման հաղթանակ են տանելու, որովհետև նրանց ուժ ու հզորություն է տալիս Հայրենիքի սերը, նրանց եղբայրությունը:

Նա, ով աչք է տնկել անկուշտ
 մեր լարիքին, տանն ու այգուն՝
 Հող ու մոխիր պիտի դառնա
 երեք զարկով մեր դյուցազուն:
 Որպես ռազմիկ կդիմագրի,
 Կովկասն անկոչ ոսոխներին:
 Չեն գտնի իրենց տան ուղին
 ու հետքն իրենց ոսկորների:
 ...Այս գոռ ժամին, ով եղբայրներ,
 ամուր, ժայռի պես, կտրովով լի
 Կրկին սրերն են բարձրացրել
 Արսեն, Դավիթ և Քյոռոզլի:

՝ Հայրենիքի համար», Հայպետհրատ, 1943:

Եվ րանաստեղծը կոչ էր անում ուժեղ հարվածներ հասցնել թշնամուն,
Քրպեսզի նա չտեսնի ժմեր տունը, չանցնի մեր լեռներով:

Խրդվենք մանկանց արցունքներով,
Երգվենք պատվովը մեր կանանց,
Զլնի՛ ֆաշիստը մեր տան քով
Չանցնի մեր լեռներով անանց:
Փառք կըշնչեն լեռները մեր
Եվ չի թեքվի Կովկասը վես.
Արևորդիք գնում են մարտ,
հզորագոր առյուծի պես:
Ո՛չ զավակներս Կովկասի
չենք երերա դեմն օտարի:
Ոսոխը թող նորից տեսնի
կարիճներին ուժը արի:

Անդրկովկասյան ժողովուրդների մարտական եղբայրության և սիրա-
գործություններին է նվիրված նաև Ս. Ռուստամի «Կովկասյան րանակը»,
Ա. Զամիլի «Կովկասի որդիներին» և շատ ուրիշ րանաստեղծություններ:

Ազրբեջանական գրողներն ու րանաստեղծները իրենց ետպատերազ-
մյան տարիների ստեղծագործություններում արտացոլում են ժողովուրդնե-
րի միասնական պայքարը հանուն կայուն խաղաղության, հաղթանակի, հա-
նուն կոմունիզմի, կառուցման. Ավազ Մադըխի «Մինգեչաուր», Միրջալալի
«Նոր քաղաք», Մ. Սուլեյմանովի «Գետնի գաղտնիքը» վեպերը, Երիտա-
սարգ րանաստեղծ Հ. Հյուսեյնզադեի «Դաշքեսան» պոեմը և այլ շատ եր-
կեր արտացոլում են կոմունիզմի կառուցման համար հայ, ուս, ադրբե-
ջանցի և այլ ազգի աշխատավորների մղած պայքարը: Հետաքրքիր հար-
ցեր են առաջ քաշված «Մինգեչաուր» վեպում: Այդտեղ, թեկուզ և համա-
ոռտակի, խոսվում է Մինգեչաուրգէսի և Գյումուշգէսի կառուցողների միջև
ծավալված սոցիալիստական մրցության մասին, որը ավելի ընդարձակ կեր-
պով նկարագրվելու է վեպի մյուս հատորներում:

Ժողովուրդների եղբայրության գաղափարներով են տոգորված ետ-
պատերազմյան շրջանի ադրբեջանական գրականության լավագույն գործե-
րը՝ Ռ. Ռզայի «Լենին», Մ. Ռահիմի «Լենինգրադի վրա» պոեմները և Մ.
Հյուսեյնի «Ապշերոն» վեպը, որոնք արժանացել են Ստալինյան մրցանակի:

Մեր կյանքի առաջընթաց զարգացման հետ քայլող սովետական գրող-
ները համառ պայքար են մղում ամբողջ աշխարհում կայուն խաղաղու-
թյան համար, մերկացնում են ամերիկա-անգլիական իմպերիալիստներին:

Սովետական գրականությունը, այդ թվում նաև ադրբեջանական գրա-
կանությունը կատարում է մեծ և պատվավոր աշխատանք աշխարհի բոլոր
ժողովուրդների միջև սեր և հարգանք, խաղաղություն և եղբայրություն
ստեղծելու ուղղությամբ: Ս. Վուրդունի «Ոոսում է նեգրը» պոեմը, Ս.
Ռուստամի «Մենք կոմունիստ ենք» րանաստեղծությունը, Մ. Իրահիմո-
վի՝ Ստալինյան մրցանակի արժանացած «Գալիք օր» վեպը, Երիտասարդ
րանաստեղծ Հ. Հյուսեյնզադեի «Ես ձայն եմ տալիս խաղաղության» րա-
նաստեղծությունը, Ռ. Ռզայի, Մ. Ռահիմի, Ա. Զամիլի, Օ. Սարևելլիի
րազմաթիվ րանաստեղծությունները նվիրված են ամերիկա-անգլիական

իմպերիալիստների ոճրագործությունների մերկացմանը, ժողովուրդների միջև եղբայրության կապերը ամրապնդելու վեհ գաղափարին:

Սովետական եղբայրակից ժողովուրդների երջանիկ կյանքը, կոմունիզմի ու խաղաղության համար նրանց մղած պայքարն ու անսասան կամքը լայն չափերով պատկերում է Ս. Ռուստամի «Երկու ամառ քանաստեղծությունների գիրքը, որը արժանացել է Ստալինյան մրցանակի: Այդ գրքի լավագույն երկերից է «Մենք կոմունիստ ենք» քանաստեղծությունը, որը ճշմարտացի կերպով պատկերացում է տալիս սովետական մարդու, իրեն կյանքն ու պայքարը ամրողջ աշխարհի ժողովուրդների երջանկության ու խաղաղության վեհ գործին նվիրած սովետական կոմունիստի պայծառ ու մարտական կերպարի մասին:

Երկվորյակներ են նրանք — պայքարն ու մարդիկ —

Միևնույն օրն են ծնվել, միևնույն ժամին:

Մենք կյանք ենք մտել որպես զինվոր ու մարտիկ

Մենք կոմիվել ենք մարտերում դասակարգային:

Մենք կոմունիստ ենք

Եվ հպարտ է մեր հոգին,

Որ կրում ենք անունն այդ,

Որ մեզ հետ արև

Ու նոր կյանք ենք տանում մենք խավար աշխարհին:

...Մենք կոմունիստ ենք

Մերն է լուսն ապագան,

Թող շողշողա զենիթում արեգակը վառ

Եվ թնդա թող ամենուր հզոր, հաղթական

Եվ մարտակոչ ձայնը քո,

«Խտերնացիոնալ»:

Ագրրեջանական գրողներն ու քանաստեղծները գովերգելով անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը, ցույց են տալիս, որ հայերը, ագրրեջանցիները և վրացիները մի միասնական ընտանիքի՝ ՍՍՌԽ ժողովուրդների ստալինյան ընտանիքի անդամներն են, որի ավագը հանդիսանում է ողջ մեծ ժողովուրդը: Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը անրաժանելի մասն է ամրողջ սովետական ժողովուրդների բարեկամության, առանց որի ոչ մի նշանակություն չի ունենա հայի, վրացու և ագրրեջանցու եղբայրությունը: Միևնույն ժամանակ գովերգելով անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը, գրողները գովերգում են ամրողջ սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրությունը, փոխադարձ մտերմությունը:

Անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը ագրրեջանական գրականության ամենասիրելի թեմաներից է: Ագրրեջանական գրողները մշակելով այդ թեման, է՛լ ավելի կամրապնդեն հայ, ագրրեջանցի և վրացի ժողովուրդների միջև եղած բարեկամական կապը, որը կուժեղացնի ՍՍՌԽ բոլոր ժողովուրդների հետ նրանց ունեցած կապերը, կօժանդակի նրանց համատեղ պայքարին՝ հանուն կոմունիզմի հաղթանակի:

¹ «Ագրրեջանական սոնետիայի անթոլոգիա», Հայսէտհրատ, 1952: